

ԳՈՐԾՉԻՆ

Վեհ է կոչումդ, ազգային գործիչ,
Լայն է քո ուղին բայց եւ տատասկոտ.
Երկնային բոցի խօսքի ուսուցիչ,
Ծակատող պայծառ, բայց հոգիդ թախծոտ...

Դու մարգարէ ես, Աստուծոյ սեղանից
Ապրող թեաւոր. վեհութեան քարոզ
Շրթունքիդ ծաղկած. ունիս երկնքից
Հրեղէն լեզու, բարբառ սիրագօծ...

Լայն է քո ուղին, բայց տատասկ գրկած
Գործում ես երգով, անվհատ հոգով.
Երկնքի բոյրով քո սիրտը լցուած,
Քարոզ ես կարդում այրող կայծերով...

Սուր բահը առած, մտած անդաստան՝
Սերմում ես սերմեր, արցունքով ջրում.
Պատմում ես ինչ է սեղան սրբութեան
Եւ ազատ ոգին քո կրծքում թնդում...

Քաջութիւն եւ ոյժ, քեզ, քա՛ջ ուսուցիչ.
Գործն է քո խօսքը... հայրենի այգում
Գործում քո հոգին... գործում քո բրիչ.
Անվհատ երգն է քո հոգում հնչում:

Մեծ է կոչումդ, ո՛վ հայ վարժապետ.
Սուրբ է կոչումդ. սրտեր դեռատի
Քո շուրջն են խայտում... տալիս ես յաւէտ
Դու նոցա թեւեր, բոցը երկնքի...

Կանցնեն տարիներ, քո ազնիւ անուն
Կրմնայ սրտերում յաւէ՛րժ անսասան.
Երկնքի բոցը, սուրբ գործը փայլուն
Կը ճեղքեն դարեր, դարեր անսահման...

Յ. ԽԱՆՆԱՐԵԱՆ